ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 դեկտեմբերի 2023 թվականի N 28-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2023 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռարձակողի խորհրդի նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:
2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.
   1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձին հաստատելու և աուդիտ իրականացնող անձի ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափը սահմանելու մասին հարցը:
   2. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձին հաստատելու և աուդիտ իրականացնող անձի ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափը սահմանելու մասին հարցը:
   3. «Հոգեվոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտն իրականացնող անձին հաստատելու և աուդիտ իրականացնող անձի ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափը սահմանելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

08 դեկտեմբերի, 2023 թվական
ք. Երևան